ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՊԱՏՄԻՉԻ «ԵՍ»-Ի ՆԵՐՄՈՒՑՈՒՄԸ ՏԵՔՍՏ
## (ըստ Արիստակես Լաստիվերտցու «Պատմության»)

Պատմագրության ժանրում գեղարվեստականության զգացողություն մեծապես ապահովում է պատմիչի կերպարը: Հեղինակը ստեղծում է պատում, որն իր կողմից չի ընկալվում որպես գեղարվեստական պայմանականություն: Լինելով իր նկարագրած ժամանակի վավերագիրը, իսկ երբեմն՝ ականատեսն ու մասնակիցը, հաճախ պատմում է նաև իր զգացմունքների մասին, կենդանի զրույց վարում ընթերցողի հետ:

Արիստակես Լաստիվերտցին ոչ միայն նկարագրում է իր ժամանակը, այլ նաև խորապես ապրում ու տառապում է իր պատմածով: Համենայնդեպս իր հուզաշխարհը նա մյուս պատմիչներից ավելի շատ է երևան հանում, հաճախ նույնիսկ ոչ բացահայտ, այլ անուղղակիորեն և «մենքը» «ես»ի տեղ գործածելով: Ի դեպ՝ նրա երկի գրեթե բոլոր ուսումնասիրողներն առաջինն այս գիծն են նշում՝ որպես բնորոշ առանձնահատկություն: Մանուկ Աբեղյանն, ահա, բնորոշում է այսպես. «Այս սգավոր պատմիչը մի ուրույն տեղ է բռնում մեր պատմագիրների շարքի մեջ: Նա իսկապես քնարերգու բանաստեղծ է. բայց գրել է պատմություն և գրել է ոչ թե որևէ ուրիշի խնդրով կամ պատվերով, ինչպես նախորդ պատմագիրներն առհասարակ, այլ ինքնաբերաբար, *իր տանջված սրտի զգացումները զեղելու պահանջից դրդված:...Էականը նրա համար ողբն է: Եղելությունների պատմությունը հաճախ նրա համար է անում, որ ընթերցողին հասկանալի դարձնի իր ողբի նյութը* »[1]: (Ընդգծումը մերն է: Լ.Վ.):

Հիրավի, նա՝ որպես ստեղծագործող, իր մտքերը ձևակերպելիս և նյութը շարադրելիս ավելի ազատ է: Եվ հենց ինքն է այդ մասին խոսում, երբ բացատրում է պատվիրատուի բացակայությունը. « *Եւ արդ ո՛չ է պարտ անհաս և անձեռնարկելի իրաց պատմող լինել, կամ ընդ գրով արկանել, զորոց ոչ այլոց աշխատութիւն տուեալ է մեզ, և ոչ յումեքէ պահանջեցաւ ի մէնջ, և ոչ մէք կարող ենք ձեռն արկանել. վասն այնորիկ բազում ինչ հարկաւոր պատմութեանց որ ընդ սոքօք են՝ անտես արարաք, այլոց թողլով ծարտարաց և հարուստ մտաց, զի թերևս պահանջեսցէ ոք ի նոցանէ. և այսու նախանձ արկից կարողացն...*» (էջ 137)[2]:

---

1 Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 60-61:

2 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963 (այսուհետ բնագրային բոլոր հղումները կլինեն նույն հրատարակությունից):

Ինչպես տեսնում ենք, նա չի բավարարվում միայն իր ազատության մասին փաստելով: Նրա համար կարևոր է նախօրոք ապահովագրել իրեն ասելիքի ողջ բարդությունը պատշաճ կերպով ներկայացնել չկարողանալու հավանականությունից. վախ, որ ապրում է ամեն մի ստեղծագործող մտքին ու երևակայությանը ձև տալուց առաջ: Միայն թե Լաստիվերցին այս մտահոգությունն ունենում է իր պատմության ողբական հատվածներին անցնելիս, իսկ պատմական դեպքերը նկարագրելիս զուսպ է և հավասարակշիռ:

Այս հայտնի ոճը, որ շատ անգամ պատմիչները, ելնելով քրիստոնեական հեզության պատվիրաններից, կիրառում էին իրենց երկի սկզբում, միայն մեր պատմագրության յուրահատկությունը չէ: Սեփական անձի նսեմացումը համեստության պարտադիր պայմանն էր, որ նրանք պահպանում էին: Այդպես վարվում էին 5-րդ դարի մեր պատմիչները: Այդպիսի նախադասությունների հանդիպում ենք նաև օտարների մոտ: Այսպես, 8-րդ դարի պատմիչ Թեոփանես Խոստովանողը գրում է. «...Նա մեզ, որպես հարազատ ընկերոջ, թողեց իր շարադրած գիրքը և մեզ առիթ տվեց պակասը լրացնելու: Իսկ մենք, որ քաջատեղյակ էինք մեր սեփական տգիտության, ինչպես և գործի դժվարության, հրաժարվում էինք այդ բանն անել՝ որպես մեր ուժերից վեր»[1]:

Պետք է նշել, սակայն, որ Լաստիվերտցու և մյուս պատմիչների նմանատիպ ոճային կրկնությունն ունի թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքային տարբերություն. նա մտահոգված է ոչ թե պատմական դեպքերը, այլ ողբերգական իրադարձություններն արժանիորեն ներկայացնել չկարողանալու համար: *«Ավա՜ղ պատմութեանս, ավա՜ղ չար արարուածին. զիա՞րդ կարացից ես աղքատ գիտութեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ գրով արկանել զայն ժամու զլեալսն, և կամ ողբալ ըստ արժանւոյն զմեր թշուառութիւնս...»*(էջ 30): Եվ եթե մյուս պատմիչներն այդ մտահոգությունը հայտնում են մեկ անգամ և սկզբում, Լաստիվերտցին հաճախ կրկնում է այն ողբական հատվածներ նկարագրելիս, իսկ սկզբում նմանատիպ մտահոգություն չի հնչեցնում: Իր բացատրություններում նա հաճախ գործածում է *գիր* բառը, որի հատուկ իմաստն ակնհայտ է դառնում պատմիչի կողմից նրան տրված նշանակությունից: Նախ՝ ի սկզբանե նա հավատում է աստվածաշնչյան գրին և իր ասելիքի ճշմարտությունը հաստատում դրանով: Սակայն այդ ասելիքը չափազանց կենդանի է, որպեսզի մնա մեկ այլ տեքստի սահմաններում, նույնիսկ եթե այդ տեքստը Սուրբ գիրքն է:

Իր բազմիմաստության մեջ *գիրն* այն իմաստակիրն էր, որը պետք է Աստծու, ասել է թե՝ բացարձակի, անճանաչելիի հետ հաղորդակցվելու միջոց դառնա: Այն տվյալ դեպքում Լաստիվերտցու միակ հնարավորությունն է, ինչն

1 Թեոփանես Խոստովանող, ժամանակագրություն, Երևան, 1983, էջ 4:

էլ նրան դարձնում է նաև վիճակի դրամատիզմի կրողը, իր ստեղծած գրական պայմանականության գործող անձը:

Նման վստահությունը գրի նկատմամբ ժամանակի բնորոշ հատկանիշներից էր: Գրի աստվածային ծագման համոզմունքը ընդգծում էր խոսքի ուժն ու ազդեցիկությունը: Բնութագրելով միջնադարի ստեղծագործողին՝ Լիխաչովն այդ մասին գրում է. «Ճանաչել երևույթը նշանակում էր արտահայտել այն խոսքով. այստեղից անհանդուրժելի վերաբերմունքը ամեն տեսակ սխալների, ցուցակների տարբերության, աղավաղումների և թարգմանությունների հանդեպ և այլն: Այստեղից էլ հենց չափազանց կապվածությունը թարգմանության տառացիությանը, սուրբգրային մեջբերումներին, ավանդական բանաձևերին, ձգտումն այն բանին, որ բառային արտահայտությունն առաջացնի ճիշտ այնպիսի տրամադրություն, զգացում, ինչպես և ինքը՝ երևույթը, ձգտումը գրավոր ստեղծագործությունից ստեղծել յուրօրինակ սրբապատկեր, խոնարհման երկ, գրական երկը վերածել աղոթքի տեքստի»[1]:

Լաստիվերտցու համար պատմությունը շարադրելուց զատ կարևորվում է մի ուրիշ նպատակ՝ պատմությունից անդին անցնելը, ուր ինքն այլևս պատասխաններ չունի, բայց ունի հ՛ր հարցերը: Թվում է՝ նա գրում է, ստեղծում գիր, ուր փնտրում է պատասխաններ:

Նրա վարած երկխոսությունն ունի տարբեր զրուցակիցներ: Առաջին դեպքում, երբ նա հստակ գիտի պատասխանը, զրուցակիցը ընթերցողն է, երկրորդ դեպքում՝ Աստված, թեև երբեմն ի հայտ է գալիս երրորդը՝ պատմիչի «ես»-ը, ում կասկածները՝ իր իմացած ճշմարտության հանդեպ, վերածվում են ներքին մենախոսության: Ընդհանրապես երկխոսությունը Լաստիվերտցու սիրած հնարանքն է: Եվ նույնիսկ անձնավորման հաճախ դիմում է կրկին երկխոսություն ստեղծելու համար: «*Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՞վ լեառն*» (էջ 73) կամ «*Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՞վ քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականաւոր ի մէջ աշխարհաց*» (էջ 79):

Երկխոսության հանդեպ այս հակումը թերևս պատմիչի հուզականությամբ է պայմանավորված: Իր պատմածն այդքան կենդանի վերապրելով՝ նա փորձում է վերապրումի տառապանքը մեղմել, վիշտը կիսել, ու դրա համար նրան պետք է «զրուցակից»: Այստեղ է, որ ինքը՝ ստեղծագործողը, հայտնվում է գրի «հակառակ» կողմում: Նա ապրում է իր հորինած աշխարհի օրենքներով, ստեղծում է գեղարվեստական իրականություն, բայց պատմագրական ժանրի պարտադրանքով ենթարկվում ոչ թե իր հերոսներին, ինչպես հաճախ լինում է նոր ժամանակի ստեղծագործողի հետ, այլ ստեղծում է զրուցակիցներ, որոնց միջոցով իրականացնում է իր ասելիքը: Նա չի բավարարվում միայն իր երկի

1 Д. С. Лихачев, Избранные работы, Ленинград, 1987, т. 1, стр. 116-117.

դիդակտիկ-ուսուցողական նպատակով. նրան պետք է զրույցի անմիջականությունը:

Զրուցակցի փոփոխությամբ ամեն անգամ պատմիչի մտքում փոխվում են նաև դիմելաձևերը: Անձնավորված լեռանը կամ քաղաքին դիմելիս հանդիմանությունն ու ճարտասանական հարցն են հաճախանում: Աստծու հետ զրուցելիս պատմիչը քրիստոնեական խոնարհությանն ու հավատացյալի ջերմեռանդությանը խառնում է ըմբոստության ու տարակուսանքի տարրեր: Իսկ ամենաիրական երկխոսությունը ընթերցողի հետ է, ով իր համախոհն է, ում ամենից շատ է վստահում, և ում համար, ի վերջո, հանձն է առնում գրելու իր ապրածը: Մինչ այդ նախօրոք ապահովագրում է իրեն. այս պատմությունն այնքան դառն է, որ ինքը չի կարող արժանապես ողբալ: Բայց ինքն անում է այս գործը միայն ու միայն ապագա սերնդի, հետո եկողների համար, այսինքն՝ իր ներկա և ապագա ընթերցողի:

Զրույցն ընթերցողի հետ խիստ դինամիկ է, զարգացող, և երկի վերջը խիստ տարբեր է սկզբից: Եթե մատյանի սկզբում Լաստիվերտցին, ընթերցողին դիմելով, գրելու պատճառը հետո եկողներիս Աստծու պատժից վախեցնելու և մեղքեր գործելուց ետ պահելու նպատակով է բացատրում, և մի տեսակ անդեմ է հնչում այդ բացատրությունը, տեքստի թելադրանքով «Հիշատակարանում» արդեն այն համախոհի, հոգեկցի, ցավն իր մեջ կրողի խոսք է դառնում:

Ինչ-որ մի պահի նա նույնիսկ մտահոգվում է իր նկարագրածի ծանրությունից, այն ազդեցությունից, որ պիտի թողնի իր ընթերցողի հոգու վրա:

*«Արդ զի՞նչ արարից, թողի՞ց ի պատմելոյ զանհնարին չարիսն որ եհաս ի վերայ քրիստոնէից՝ խնայելով ի ձեզ, եթէ շարժեցից ողբս և հառաչանս ամենեցուն որք հանդիսակից էք այսմ դժոխալուր պատմութեանս. բայց գիտեմ, որ կամիք լսել. վասն որոյ և ես ի բաց եդեալ զանձին դանդաղանս, գրեցից զգլխաւոր տեղեաց մի ըստ միոջէ զանհնարին չարիսն»* (էջ 86, Ընդգծումը մերն է: Լ. Վ.). սա և՛ արդարացում է ընթերցողի առջև, և՛ համախոհության հաստատում նույն ընթերցողի հետ: Լաստիվերտցին ողբական հատվածներում միշտ իր ընթերցողի հետ է, ավելին՝ միշտ փորձում է իր ասածի ունկնդիրը լինել կամ, այլ կերպ ասած, «ընթերցողը»: Դա երևում է այնպիսի ճարտասանական հարցերում, որտեղ նա ասես սովորեցնում է ինչ զգալ, օրինակ՝ *«Ո՞ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն հաճախութեամբ»* (էջ 87):

Գրելով նա մի կողմից իրականացնում է օտարման գործընթաց, և իր «ես»-ը ազատում իրականության ծանրությունից, մյուս կողմից գրով հաստատում է ապրել՝ շարունակելու, վաղվա օրվա մասին մտահոգվելու նրանց հաստատակամությունը, ում մտավոր ներուժի կրողն է ինքը: Այս հանգամանքը շեշ-

տելու համար նա ունի դեպքերի հավաքական հերոսը՝ մեղավոր և տառապած: Այդ հերոսը ողջ ազգն է, «մենքը», որի մեջ հոժարությամբ տեղավորում է նաև իր «ես»ը :

Միայն թե պատմիչի «ես»-ը այդ «մենք»-ից ժամանակ առ ժամանակ առանձնանում է և բացատրողից վերածվում է հարցնող-տարակուսողի. *«Բայց ո՛չ գիտեմ որպիսի՛ օրինակաւ անց ընդ նոսա այս ամենայն՝ եթէ **ըստ կարգի խրատու**, եթէ **վասն առաւելեալ ամբարշտութեանց բնակչաց երկրին**, եթէ **վասն դժնեայ բարուց արևմտական զօրացն ի խուժադուժ ազգաց ժողովելոցն»*** (էջ 31, ընդգծումը մերն է՝ Լ. Վ.):

Ընբոստության տարրն արտահայտում է անկեղծության այն մասնաբաժինը, որը քողարկված չէ դարի մտածողության դիմակով: Եվ քանի որ այդ դիմակը չկա, կա միայն ժամանակային սահմաններից այն կողմ հայտնված ստեղծագործողը[1]:

Դեպքերի ընկալումը երկի վերջում նմանվում է եզրակացության. *«Գավազան տանջանաց և ոչ խրատու՝ առ ի ձեռն Աստուած զԹուրքեստան և զտունն Պարսից, և նոքօք դատեաց զմեզ ըստ իրաւի իւրոց դատաստանացն. զի խրատու գաւազանն՝ հայրական է, իսկ տանջանացն՝ դատաւորի»* (էջ 113):

Հետաքրքիր է, որ այս եզրահանգման ժամանակ արդեն չկա երկխոսությունն Աստծու հետ, այլ մնում են միայն դատողությունները նրա մասին: Այնինչ սկզբում ես-ի(պատմիչի) և Դու-ի (Աստծու) երկխոսությունը որդու և հոր երկխոսություն է:

Չմոռանանք, որ 5-րդ դարի մեր պատմիչների կրոնական հայացքներից Լաստիվերտցու և միջնադարի մյուս պատմիչների կրոնական հայացքները տարբերվում էին իրենց բնույթով: 5-րդ դարում պատմիչները քրիստոնեությունը փորձում էին պաշտպանել օտարներից, ավելի ուշ Լաստիվերտցին և մյուսները այն պաշտպանում էին ոչ միայն օտարներից, այլ նաև իրենց մեջ ապրող ինչ-ինչ կասկածներից՝ ծագած այն բազում դժբախտություններից, որ թափվում էին հայ ազգի գլխին:

Իհարկե Աստծու հետ զրույցի քարացած ձևի՝ աղոթքի տարրերը նույնպես առկա են Լաստիվերտցու խոսքում.

*«Ո՛վ ողորմութեան քո Աստուած, որ այնքան ներեցեր անօրինացն խրոխտալ ի վերայ խաշին արօտի քո: Յիշեա՛ զժողովուրդ քո զոր ըստացար ի սկզբանէ գալստեամբ միածնի քո, և փրկեցեր արեամբ օծելոյդ: ...Մի՛ յիշեր զմեղս մեր, և մի՛ վասն մեղաց մերոց դարձուցաներ զերեսս քո ի մէնջ...եւ արդ*

1 Ստեղծագործական նույն ոգին է գրի հիշողությամբ հասնում բանաստեղծական երևակայությամբ օժտված մյուս սերունդներին: Աբովյանի անկեղծ խոհերը իր ժողովրդի մասին կամ Սիամանթոյի կողմից եղերական տեսարանների նկարագրությունը ասես կրկնում կամ շարունակում են Լաստիվերտցուն:

*ահա դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ մոլորեցաք գերութեամբ ի բազում ազգս, և եղաք իբրև զպիղծս ամենեքեան»* (էջ 70)[1]:

Ահա մի բողոք, որի էությունը, ըստ Լաստիվերտցու, միայն Աստված կարող է հասկանալ ըստ արժանվույն: Գրական տեքստի պայմանականությունը հնարավորություն է տալիս խոսքը հենց նրան ուղղել: Պետք է ասել, որ Լաստիվերտցին չի սահմանափակվում միայն Աստծու հետ զրուցելով: Արդեն ասել ենք, որ նրա փնտրածը նաև պատասխաններն են: Ուստի ընթերցողին տեքստի միջոցով նա միջնորդավորված զրույցի է տանում Աստծու հետ արդեն աստվածաշնչյան մեջբերումների միջոցով. երևույթ, որ շատ ուսումնասիրողներ (Կրիստևա, Բարտ, Գադամեր, Էկո և այլք) հենց *երկխոսություն* բառով են բացատրում, ուստի Գադամերի միտքը գործածենք որպես ամփոփում. «...Ողջ ասվածը օժտված է ճշմարտությամբ ոչ թե պարզապես ինքն իր մեջ, այլ մատնանշում է արդեն ասվածը և դեռ չասվածը...Ասելիքը հասկանալի է դառնում, երբ չասվածը համատեղվում է ասվածի հետ»[2]:

---

1 Այս հատվածի հատկապես վերջին միտքն աչքի է ընկնում իր բազմիմաստությամբ, իսկ իմաստային շերտերի բացահայտումը ակնհայտ է դարձնում նրա պատմագործառական բնույթը: Այս նույն միտքը հետագայում գործածված ենք տեսնում այդ ժամանակը պատկերող Վարդան Գրիգորյանի «Դար կորստյան» վեպում, որտեղ գլխավոր հերոսը թուրքերի մասին մտածում է գրեթե նույն բառերով. «Ինչի դիպչեն, անվերադարձ պղծում են...» (Վարդան Գրիգորյան, Դար կորստյան, Երևան, 1985, էջ 19):

2 Пост-модернизм, энциклопедия, Интертекстуальность, Минск, 2001, yanko.lib.ru.